

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԱԽԱՅԱՐԴԻՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա.

ԱՌԱՋՆԱԳՈՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Յայնտի է բազմաց որ Johan Guttemburg (*) (4. 1398 – 1468) առաջին պատիւն ունեցած հնարելոյ և հաստատելոյ տպագրութեան արաւետան յամին 1455 որ, յիտ այնու՝ տակաւ առ տակաւ տարածուեցաւ նախ Արքմանեան և ապա Արքելեան քաղաքակիրթ Ազգաց մէջ։

Թան ամօք յառաջ երբ մերազնեայք տօնախմբում էին Հայկական տպագրութեան չորրորդ հարիւրամեկի լրում՝ կարի հետաքրքրութեաց կարգարար մեր լրագրաց ունաց մէջ՝ կրատարակեալ ծանօթութիւն մի թէպէտե երեւում էր որպէս ի լրոյ և սթէ թէ յամին 1472 Հայերէն մասնական տպագրութիւն մի լոյտ տեսած էր մէկ Բազմակեզուեան Քերականութեան մէջ՝ հըրատարակեալ ի ներքոյ հովանաւորութեան Գաղղրական Գարոցին (Collège de France) ուր, որպէս նմոյլ, քանի մի էջեր նուիրուսէ էին բուն Հայկական Ավագանութիւն եւ նոյն նակ լեզուն առանձնայտակութեանն, համայն Հայկական տափուք Անձամբ խորաքնին հետամուռ եղէ, ասս ի Լոնգոն, ի խնդիր գաւերտականութեան առ այս՝ բայց ոչ յաջողեցայ։ Բրիտանական Թանգրանն ունի մէկ լիակատար ցուցակ գրեանց՝ հըրատարակեալ ի Փարիզ՝ սկսեալ յամին 1170, զոր ուշի ուշով քննելով չտիսի ունէ արձանագութիւն ի մասին վերյիշեալ երկարութեանն Սակայն, զիարդելոյէ, ի մի մեր Հայոցի գրասէրք, բնակեալք ի Փարիզ, միջնորդ ունից ունինք ունինան քննելոյ տեղույն առաջ-

նակարգ զբագարանաց հնագոյն գրեանց Ցուցակներն, և եթէ այդպիսի մի հրատարակութիւն իրօք գոյաւթիւն ունի, չնորհալի ծառայութիւն մի պիտի մատուցած լինեն մեր Ազգի քան զամենայն նախասկզբական տպագրութեան, նորա նմանահանութիւնն հրատարակելով մեր Պարբերականաց կարուրագունից մէկին մէջ։

Թէպէտե զիսեմ նորութիւն մի չէ յիշես, սակայն ի կարգի եւ պատկանելի է մեր նիբն իշխատակի աստանօր որ 1512–1513 թօւականներում էր որ Հայկական տափուք տպագրեալ նախնական հնգ գրքեանց լրյա տեսան, կրատարակեալ Վենետիկոյ մէկ տպագրանական Հաստատութենէն, համայն կրելով Տպարանին սեպհականեալ տուննակի նշանադրումն, այս է՝ տողագծեալ բոլորակ մի բաժանեալ ի չորսին Քառուակունն Արկու տրամագիծների մէկն՝ ուզգածիք բարձրանալով անդզ քան զբուրակն իշխանում է խաչածե, եւ համայն ներփակեալ երկոտողեան քառակուսի շրջանակաւ։ Չորս Լատիններէն տառեր, D: I. Z. A, երեւում են մէն մի, յաջորդաբար, քառամասանց մէջ։ Այդուքի ննդեսին զբրեանք, որք կրում են վերյիշեալ նշանագրումն, կարի հազուազիւտ են այժմ։ Գնահատիւ Սիրոն Հանդիսի վերջնագոյն հրատարակութեանց միոյն մէջ(*), նկարագրե-

(*) Կանուխի ստացուած այս գրութիւնը կը ցանկին ուշ հրատարակելուու համոր։

լով երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանուց նորակառոյց («Կիւլաէննիւան») Գրադարանի բացման հանդիսակատարութիւնն, ուշագրաւոյ կարգարկը որ այս Հայկական ապագրութեանց պատուական Երախայրեաց օրինակներից գտանում են յիշեալ վանքում Տպագրական հոռովեանց Եւրոպացի ուսումնակերք (որոց ոմանց հետ խօսակցութիւն ունեցած եմ) քաջ զիտեն վերյիշեալ նշանագրութիւն, բայց, աւազ, որ մինչ ցարգ հրատարակեալ նախնական ապարանական պատմագրութիւնք անկարող եղին սկզ վասակելի լուսարանութիւն տալ թէ մկ ոք էին նորքա որք տէր էին այդ տպարանինք Այսայն և այսպէս գիտնական համակարձեաց եղբակացութիւնն այն է թէ այդ տպարանն Խոտայիսն մէկ Հաստատութեան էր, կամ թէ պատկանում էր Խոտալացի տպարանապետից մէկ խմբի, որոց անուանց սկզբնատառքն, D. I. Z. A., յայտարարուած են իւրեանց որդեգրեալ նշանագրութիւն մէջ, և որոց տպարանի գործատան մէջ թիրես աշխատում էին Հայազգի տպաշարք եւ փորագրութք՝ ի լոյս ընծայելոյ նախնական այդուքիկ Հայերէն հնգամին հրատարակութիւններն՝ բաժկացեալ հետեւեալներէն, այսինքն, յամին 1512, Պարցմանաւար (վան Հայկական 961 թուականին = Յ. Տ. 1512) որ բավանդակում է նաև ուրիշ նիւթեր, զոր օրինակ, Կազանդացոյց, Երազացոյց, Կալին. և յամին 1513 Պատարազաներ, Աւրբարագիր, Տաղարան, և Աղբարք:

Բ.

ԱՐԳԱՐԻ ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Փառքն և պատիւն առաջին Հայկական սեպհական Ֆաղբարատունն հաստատելոյ, վեշտասաններորդ գարում, գեր ի փորյ քան յայլ ուրեք տպագրական արուեստի ծաղկեալ Վենետիկ քաղաքում, գրաւում է յաւերժական յիշատակաւ գիտակորեալ՝ մեր երեւելի հայերնասէրն Արգար Թօխաթեցին, որ ի հեճուկս ամենայն խոշնբոտից՝ անսպանելի աշխատանքք և եւանդեամբ ձեռք բերելով տեղեւոյն Պետական անհրաժեշտ արտօնութիւնն, որպէս առաջին արգարք՝

ի լոյս աշխատիկ լնծայեց, յամին 1565, իւր Հայերէն պատկերացարդ Սալմասարանն, տպեալ վատահելի Հայերէն մէկ զըրշագրէ:

Միքայէլ Կաթուղիկոս Հայոց, յամին 1563, Արգարին յլեց որպէս Դեսպան յիւր կողմանէ, առ Հոռվայ Թահանայապետն, Պլու Դ., նախ՝ վասն բարեկամօրէն լուծումն տալոյ հոգեկան քանի մի խնդրոց և մտերմական յարաբերութիւն հաստատելոց (ըստ ոմանց պատմաբանից) ի մէջ երկուս տեք Եկեղեցեաց, եւ երկրորդ՝ վասն ուստմասիրելոյ, ի Հոռվմ եւ ի Վեհեատիկ, տպագրութեան արուեստին պատկանելի ամենայն մանրաբանութիւններ:

Կիպրոս կը զւոյն վերաբերութեամբ մէկ Պատմութեան մէջ (որոյ հեղինակն է Աբակուրան) առնչութեամբ Հայոց թագառուրաց յարաբերութեանցն այդ կզզւոյն հետ՝ սկսեալ Խաչակրաց ժամանակէն մինչև Տաճկաց տիրումն յամին 1570, բավանդակում է նաև ժամանակաբանական ցանկ մի տեղւոյն անցից և գարձից, որոյ մէջ յիշատակուած է հետեւեալն: — և էջմիածնի Կառթուղիկոս Միքայէլ Սեբատացիի կողմէ և Հոռվմ զրկութ գեսպանը Արգար, որին և Առութան, և Տէր Աղեքաննոր քահանայ, և կը ասնին Կիպրոս, 1563: »

Արգար Հայկակն սերեալ էր ազնուական եւ ցատ մանց նոյն իսկ իշխանական տումէ: Իւր որդին, ինչպէս որ Սալմասարանին պատկերաց միոյն մէջ տպագրուած է, ունէր Marcos Antoninus (կամ ըստ որդեգրեալ Բատականին, Marco Antonino) որպէս իւր առաջին անուանք, բայց Հայաստան աշխարհում նա աւելի ծանօթ էր իւր բուն անուամբ՝ Սուլբան կամ Սուլբանաւան, որ ինքնին յայտարարում է նորա սերումն Արգարական ընտանիք: Ապացոյցք բացումն են, նաևս, որ հայր և որդի գրաւերք էին, ինչպէս որ Արգարի Սալմասարանին սկզբնաւրութեան առաջին երկու պատկերաց տեղեւատու ստորագրութիւնն ես յայտնում է զինքն Արգար՝ սղպիր» և իւր որդին՝ «գրայմիտոն կոչմամբ:

Ուշափ որ կարողացած եմ տեղեկութիւն քաղել՝ Արգարի սոյն Սալմասարանի հաջուագիւտ առաջին տպագրութեան օրինակներից, մինչ ցարգ, միայն երեք հատ զոյութիւն ունէին՝ անսօթ հնաբանից, որոց

մէկն միայն կատարեալ համորուած այլ միւս երկուուն թերակատար ասու եւ անդ Սակայն ներկայ Յօդուածիս ստորագրողն կարող է յայտնել որ այդ առաջին տպագրութեան չորրորդ օրինակ մի ևս, անթերը և սքանչելապէս լաւ վրանկում, ի լոյս եկած է և որ այժմ առանձին սեպականութիւն է մէկ Հայազգի բարեկամիս: Ի ճահ ենք համարում միշել աստանօր, անցողակի, որ կանգուի Իրաւունական Թանգարականի Քրագրանի Հայերէն տպագրեալ գրեանց հաւաքստոյին մէջ, ամենաշինն է «Յովհաննէս Տեղբնցւոյ Սաղմուսն», տպագրեալ ի Վենետիկ յամին ԲՂԶ (= 1036) Հայկական թուականի, այսինքն՝ յամին Փրկչական 1587, Պօր էր 22 ամօք զինի Արքարի Սաղմուսարանի հրատարակութեան:

Արքարի Սաղմուսարանի առաջին տպագրութեան այս վերջնագոյն ի յայտ եկեալ գեղեցիկ օրինակն, զոր այժմ առժամանակեայ ունիմ աչացս յանդիմանն փոխառութեամբ բարեկամէս, համանդամայնօրէն լիուլի՛ բրագնդակում է ամբողջ 150 սաղմուսներն, հանդերձ խորագիլուք՝ նշանաբեկուզ գուրեղայսն ենիւթ և զապատճառն մասամբ և իմաստից սաղմուսացն: Կազմ միմիայն յետապայ սուտականի կ'երեկի պատկանի՛ փոխան նոխնականն եւ, հաւանականօրէն, վերագրելի՛ Փաղջիկան Եթեղափոխութեան կամ նապոլիոնական շըշանին: Դրէին չափն է ըստ հետեւելուն: — Երկայնաւթիւնն 6 թթաչափ, լայնութիւնն 4 թթաչափ եւ խորութիւնն 1½ թթաչափ: Ամբողջ թղթերի ծալքերն ճոխ ոսկեզօծ են շեղագծեալ ոսկեփորիկ զարգարանօք (gaufrefed) — ժամանակակից երեւոյթ մի վեշտասաներորդ գարու վայելչագոյն տպագրութեանց արուեստին: Խւրաքանչիւր էջ բովանդակում է տասեւչորս տող տպագրութիւն, և երբ մանրատառք են երեւում՝ որպէս ափազս եւ բանակի իմաստից սաղմուսացն այս վերջնայն երկու տողերն յօրին ուածանած մէկ տող միջազգութեան համար բուռն տառից: Դրէն ունի եօթանասուն գարգարանական Փիխագիր առանք, եւ, ասու եւ անդ, բազում քզանց, քայլին զարգանքարք, համայն զարգունակ, այսինքն՝ առանց ուեէ գունից գործածութեան: Էջերի երեսահամարներն կը բում են սովորական թուանշանք՝ զետեղ-

եալ ի ճակատ Հայերէն նոյնարժէք Ալփաբեկից՝ մէն մի աւ իւրաքանչիւր տասնեւեց էջ, միջանկեալ էջերն թափոր լինելով երեսահամարներէ: Զոր օրինակ, ուանք երեւում է երկիցս, այսինքն՝ առաջին եւ վեշտասաներորդ իջից ի ստորեւ. օք.՝ ա եօթեատուներորդ եւ երեսունեւերկուերորդ իջից ի ստորեւ. «գ.» ա երեսունեւերկ իջրորդ իջից կ'ուրաքանչան: Ըստափ այն պարունակում է $34 \times 16 = 544$ էջեր, համայն լիուլի տպագրեալ, բացառեալ առաջնն և զերջին երկու էջերն որք բոլորովն թափուը ի տպագրութենէ՝ կրում են միայն «ա.» և «լ.» ա երեսահամարներն: Ժամանակակից համայն ուրիշ ազգաց տըպագրեալ գրեանց առաջին էջն եւս, կամ ինչ որ արգիս ծանօթ է մեղ որպէս տիտղոսակիր ճակատ, նոյնպէս թափուը էր տըպագրութենէ: Դիտելի է սակայն որ առներկանի նկարագրեալ Արքարեան Սաղմուսարանի սուաջն էջն վերայ երեւում է երեմեն ունեցողին անուան ձեռագիր ստորագրութիւնն հանդերձ թուականաւ: Կերպն գրուած է Խոալերէն լեզուաւ. — Adi 30, Ottobre 1615 — բայց անուան ստորագրութիւնն երբայրէն՝ է ընթեռնի Գուտա Մանչեսո կիւրուի. Տ. Բ. ի վերին ծայր երրորդ էջն գրուած է, Լատիներէն լեզուաւ եւ միեւնոյն գոյն մելանան որպէս 1615ին ունեցողին ստորագրութիւնն (առաջին էջն վերայ), Psalterium in Lingua Armenicam translatu.

Սաղմուսարանիս 150 երորդ, կամ վերջնն, սաղմուսէն անմիջապէս զինի՝ յաջորդարար զետեղաւած են հետեւելներն, բովանդակուած 521 եւ 541 էջների միջն, զորս ընդօրինակեմք ի ներքոյ՝ անփոփոխ:

(II) ... Խնճնալիքիր դաւրայ... «Փոքր ուի ես յեղբարս իմ և կրսեր ի տան հաւը սիմոյ և արածէի զետեղնս հաւը իմոյ: Զեռք սիմ արարին սաղմուսարան. և մատունք իմ և կազմեցին զգործ ի աւրնութիւ. ի սոկ արդ ո՞ւ պատմեսցէ զայս տն. իմում. ինքնին ստր. ամի. լուիցէ զամ.։ եւ առաքեաց

(Ա) զկըշտակ իւր և համբարձ զիս ի հաւտէ ոխաշանց հաւր իմոյ. և աւծ զիս յաւծումն սիլոյ իւրոյ: Եղարք իմ մհծամեճք եւ գեղեցիկ ոչ համեցաւ ընդ նոսայ ար. ած: և ելի եւ ընդ յառաջ այլազգոյն: և նզովեցի զկուու իւր, հանի զսուսեն ի նմանէ և և հատի զզուու նորին: և բարձի զնախաւ ատին յորդոցն իելի: օ:

(Բ) Աւրինութիւն երից մանկանց ի ինուցին (48 տուն):

(Գ) Աւրինութիւն Մարիամու ածածնին: «Մեծ ացուցէ անձն իմ զտր.» եւ այլն (8 տուն):

(Դ) Աւրինութիւ. Զախարիայ հաւրն, Յովհաննու Մկրտչին: — «Աւրհաւալ ար. ած. ելի.», եւ այլն (10 տուն):

(Ե) «Ազաւրք եւ աւրինութիւ. Միմովին, ծերունոյ: «Արդ արձակեայ զծառայր» քու ար.» և այլն (2 տուն):

(Զ) Խոսովանութիւն Մանասի քափաւորին: «Տք. ամենակալ ած. արբահամու», եւ այլն (28 տուն):

Պատկերեք: Ավազմուարանն ունի, ընդ ամենայնն, տասնեներկու տախտակաֆոր (wood cut) խորհրդալիք և վայելւագործ խորանապարդ պատկերք՝ աւանց երանգաց գործածութեան, որոց առաջին երկու եւ զերշին երկու պատկերաց կաղապարքն Արգար յատկապէս պատրաստել տուած է իւր զլքին համար, և որոց նկարագրութիւնն արժանի ենք համարում յարել աստանօր ի ծանօթութիւն սիրողաց Հայկական հնագիտութեանց: —

(Ա) Խորանազարդ (էջ 2): Հռովմայ Քահանայապետի, Պիոս Զորրորզի, հանդիսաւոր ընդունելութիւնն ձայոց ՚Իեսուսին: Մասնակցող համայն անձնաւորութիւնքն, բացառեալ Արքարի երիտասարդ որդին, մօրուսաւոր են որոց անուանքն, Լատին գլխագիր տառիք, տպուած են առ Երի իւրաքանչիւրոյն: Կեզզունն գրաւում է ի ինքն Պիոս Զորրորզ՝ քազմեալ ի գահ քահանայապատիք և եւ զըջապատեալ զեց նստեալ խորհրդականոց, Երեք առ աջ և Երեք առ ահեակ, ամեննեթին մօրուսաւորք: Դուքսին գլխոյն ի վեր քամեակուած է իւր անուանն, HIERONYMVS PRIOLVS. Քաղաքին անուան առաջն չորս տասերն, VENE, երեւում են առ աջ եւ մասցորդ Երեք տասերն, TIA, առ ահեակ Դուքսին անուանն: ի ստորոտ Քահին նշանակուած է թոււար

հանգուում է ահեակ ծնգան վերայ: Քահին ճակատն ի վեր՝ փրագրուած են PIVS IIII, և MD առ աջ և LXV առ ահեակ, այսինքն է՝ Յամի Տետոն 1565: Առ ահեակ կողմն Քահին կանգնած են երկու Կարպինալք — CARD. BORROMEVS (որ մերաւոր ազգականն էր Պիոս Զորրորզի, և որ համբաւ ստացու որպէս սրբակեաց և ուղղագալ Արքեպիսկոպոս Միլանայ) և CARD. MORONVS, երկուքն ծիրանազգիստք՝ և առաջինն ունելով զսովորական Կարպինալքական գլուխակ՝ ի գլուխ, իսկ միւսն Համալսարանական (Collegiate Hat): Առ երի սոցա է եպիսկոպոս մի, EPIS. FIOR DIBELLO, Համալսարանական զիխարկաւ, նստեալ հանդէպ մէկ փաքքիկ քրասեղանի, որոյ զերայ տեսանելի է հրովարտակ մի՛ կախեալ ունելով գժապաւինեալ կնքագրում մի, եւ ինքն եպիսկոպոսն ունելով յահեակ ձեռին իր ինչ, որ թուու ինչ լինել պատուանական կիքին: Համանականանաբար սա Վատիկանական Առանձնապարին է: Առ աջ կողմն Քահին կանգնած է այլ մի Կարպինալ (սովորական Կարպինալան զիխարկաւ), CARD. AMVLIVS V., ընդուղանեալ որոյ երկայնեալ ձեռին՝ ի ծունգս եկեալ, հայկական տարապիւ, եւ ամբարձեալ ունելով ի ձեռս զբաց տուփ մի (թերեւս նուէր ինչ մեր Կաթուղիկոսէն առ Պիոս Զորրորզ), պատկերացած է Հայկական Դեսպանն, ABAGHAR. Երիտասարդ մի, Նոյնայտ հայկական տարապիւ, կանգնեալ առ Երի Արքարի՝ նորու որդին է, MARCO ANTR.º ARMENO, ունելով կախեալ յաջ ձեռին իր ինչ քառանկիւնակե՝ ի իմանութիւն զարդարուն բարձի: Առ ծալը աշակողման Քահին գոյ կանգուն հովուապետական գաւազան մի՛ խաչ ի գլուխ, որով ամբողջանում է պատկերն:

(Բ) Խորանազարդ (էջ 3): Վենետիկոյ Դուքսն (Doge of Venice) քազմեալ ի գահ խոյր ի գլուխ և զգեցեալ պետական պատմուճանաւ: Եւ շըջապատեալ զեց նստեալ խորհրդականոց, Երեք առ աջ և Երեք առ ահեակ, ամեննեթին մօրուսաւորք: Դուքսին գլխոյն ի վեր քամեակուած է իւր անուանն, HIERONYMVS PRIOLVS. Քաղաքին անուան առաջն չորս տասերն, VENE, երեւում են առ աջ եւ մասցորդ Երեք տասերն, TIA, առ ահեակ Դուքսին անուանն: ի ստորոտ Քահին նշանակուած է թոււար

կանն, MDLXV, այսինքն է յամին Տետրու 1565: Գոմի ճակատին ջրարդաքանգակ կոսմարին մէջ յայտնուում է թեաւոր Ալպեւծն Վենետիկը: Երկու պահապանք կանգնած են արտաքոյ կամարի կիսաբրլորպիկն, մէկն առ աջ եւ մըւսն առ ահեակ, անձնիւր ու նեղով ի ձեռին ճիւզ մի սաղաթթալից արժաւուոյ: Ի կեդրոն Հանդիսավայրին յառաջի կանգնած է հայրն Հայկական սեպահական տպագրութեան, Արքար, աղերսագիր մի ի ձեռին (անտարակոյս առնչութեամբ իւր Հայկական Տպարանի հաստատութեանն ի Վենետիկ): Ի ներքօյ վերյիշեալ երկու պատկերացն, որք զոն գէմ յանդիման միմենաց, երկում է հետևեալ տըպագրեալ թշատակութիւնն: — և ի թվականին հայրց, Ն. Ժ. Դ. Ամին եւ Սովոխթցի արքար գպիրս խնդրեցի զայս նոր զիրս, ոք հոռով ի պետրոս փափուն և երես կրաման ջննելու, բարեխաւութբ: այս կարտինալաց և այս, եպկոսն: և իմ գրայմիտ սուլտանիայ որդոյս եւ եկեալ ի գեղեցիկ «նաւայ հանկիւտ, մայրաքաղաքն, որ կոչի «վանասարիկ, ի թագաւորութեն. երլէմոն, պիտին եւ շինեցաք զայս նոր զիրս, եւ զաս. փոքր մէկնիչս սազմուացու: Կարծեմ ամեննցունց հասկանալի է որ սոյն ինչատակութիւնն մէջ երկու անուանց անզրադարձութիւնքն բացարելի են այսպէս, այսինքն՝ «Պետրոս» = Պիտի Դ. և «Երլէմոն» = Հերոնիմոս Փրիօլոս (Դուքքն):

(Դ) Մեդալլիին (էջ 510): Ըստ իմ կարծեաց՝ սեղիք չկայ տարակուսաելոյ որ այս Մեդալլիոնն ներկայացնուում է Արքարի Տըպարանի առանձնայատուկ նշանադրուշն (Printer's Device): Կազմակերպութիւնն է քառակուսի շրջապատեալ բարորակ մի՛ դարնեպանց շրջանակաւ՝ լնդմիշեալ ի զերեւ և ի վայր երկու սերսկրէւք: Ի կեդրուն գոյ կանգուն երկ-զիիկան խաչ մի՛ Հողին Սուրբ, աղաւանակիրպ և ճառագայթարձակ, իջանելով աստղալից երկնակամարէն, գոյ հովանի ի վերայ ժամանակս, զիթէ ընդհանուր հաւանութեամբ՝ համարելով զայս սկզբնատառ անուան զործատան յորում տախտակփորքն քանդակուեցան Արքարեան մեր սոյն Սաղմօսարանի յիշեալ ութիւրանագարդ պատկերաց հինգն կրում են այդ սկզբագիչ նոյն սկզբնատառն, զորս ես անձամբ ուշի ուշով բազդատեցի նոցա տախտակփոր նախատիպների հետ՝ որք երկում են 1490ին տպագրեալ «Mallermi», Կոսակարանին մէջ, զորմէ պատուական օրինակ մի՛ խնամօք պահեալ՝ ժառանգութիւնն է Լոնդոնի Բիթտանական Թանգարանին, եւ, ամենայ մանրամանութեամբ, բոլորովին նոյն եւ նման զի: Զիք երկբայութիւն որ բան տախտակափորքն քանդակուած «Mallermi», Կոսակարանի համար, Արքար կամ տիրապետեց գնմամբ՝ կամ փոխառաւ՝ իւր Սաղմօսարանի համար:

Ի դաշտին Դէկրայ եւ ժողովուրդն ի միջի երկրպագութեան, ի ձայն փողոյ՝ սրնզի՝ թմրկի՝ քնարի՝ եւ տաւզի (Ց'ևս, Դանիէլ, Գուուի Գ.): ուժգնութեամբ ի գործածութեան: Փոքրացոյն խորանն ցուցանուում է զերիս Մանկունն ի բորբոքեալ հնոցին ընդ հովանեան սաւառնեալ պաշտպան հըրեշտակի միոյ:

Սաղմօսարանիս մնացորդ ութիւր Խորանագարդն ունին իւրեանց մասնաւոր ուշադրու պատմութիւնք, այսու զի՝ նոքանմանահանութիւնք են հնգեւտասաններորդ դարու վերջին քսանամելիին տախտակափոր սքանչելի քանդակաց, արտագրութիւնք իւտալցի հմուտ մէկ փորագրողի, որք երեւցան այդ միջոցին տպագրեալ կրատարակութեան ոմանց մէջ, նամանաւանդ, յամին 1490 տպագրեալ՝ «Mallermi Bible, Կոչուած հոչակաւոր Կոտակարանին մէջ (այսքն է՝ առաջին Խոտակերէն կեզուաւ Սուըր Քիրքն՝ թարգմանեալ Լատիներէնէ՝ ձեռամբ վենետակացի մէկ զանականի, Niccolò di Mallermi անուամբ): Սոքին տախտակափոր պատկերաց ոմանք ցուցանուում են «Ե», նըշանագիրն, որպէս ումեմի անուան սկզբնատառն: Երկար ժամանակ, ի սկզբան, հետագառողք կարծում էին թէ այն պատկանում էր Botticelli (Յ. Տ. 1444-1510) կամ Bellini (Յ. Տ. 1429-1507) արուեստագիւտաց միոյն: Սակայն՝ երկոքին իսկ սոքին փերգարութիւնք անհաւանական գտառեւցան ի յետապայ ժամանակս, զիթէ ընդհանուր հաւանութեամբ՝ համարելով զայս սկզբնատառ անուան զործատան յորում տախտակփորքն քանդակուեցան Արքարեան մեր սոյն Սաղմօսարանի յիշեալ ութիւրանագարդ պատկերաց հինգն կրում են այդ սկզբագիչ նոյն սկզբնատառն, զորս ես անձամբ ուշի ուշով բազդատեցի նոցա տախտակփոր նախատիպների հետ՝ որք երկում են 1490ին տպագրեալ «Mallermi», Կոսակարանին մէջ, զորմէ պատուական օրինակ մի՛ խնամօք պահեալ՝ ժառանգութիւնն է Լոնդոնի Բիթտանական Թանգարանին, եւ, ամենայ մանրամանութեամբ, բոլորովին նոյն եւ նման զի: Զիք երկբայ-

յութիւն որ բան տախտակափորքն քանդակուած «Mallermi», Կոսակարանի համար, Արքար կամ տիրապետեց գնմամբ՝ կամ փոխառաւ՝ իւր Սաղմօսարանի համար:

Ի գլուխութիւն ցանկացողաց Հայկական բաղդասարական հնագոյն տպագրութեանց, ահաւասարկ՝ յառաջք ենք ածում Արգարեան ոյն Սաղմոսարանի իշխց միոյն նմանահաւատութիւնն։



Պուրաբանք Ա Ըստայաւակեռեայ: Ճզ
Կոչումն է Թանուաց:
Ս Պուտովանել շերուք մն.
Ճի քաղցր զիյաւիստ
անեռողը մութինորա:
Ա Սասցենփրկեալքն զորսփրկ
Եացիձեռաց թշնամյնց
Յ ամգաւառացդողովեացցնոսա
յարելից եյարեմտից իհիւսիւսոյ

Խորանազարդն ներկայացնում է Արահանաւու և ի տեսեան զիշերին հայութածքն ի Տեառնէ իւր «անորդիւ» լինեցին, եւ Աստուած խոստանալով նմա զաւակ (Տե՛ս Ենն, Գլ. ԺԵ.): Առ մի կոզմի՝ Արրահամ, կանգնեալ ձեռնամած՝ ունկնդիր է լինում Աստուածային հրամանին — «հայեաց ընդ երեկին», և թուեա՛ զաստեղս . . . ա՛յն- պէս եղիցի զաւակ քո» (Տուն 5): Ի միւս կողմն՝ զարձեալ Արրահամ, նստեալ՝ կատարում է Աստուածոյ միւս մի հրամանն — և Ա՛ն դու ինձ երինջ երեմեան, եւ քօշ երեմեան, և խոյ երեմեան, և տատրակ, և աղաւանին» (Տուն 9):

Թիւատակարանն զրաւում է Սաղմոսարանի վերջներկ՝ և նորա անմիջապէս նախորդ՝ երկու էջերն (էջք 542—543), լիովին տպագրուած ծայրէ ի ծայր, զոր ընկորինակեմ ի ներքոյ՝ որպէս որ տպուած է, այսինքն՝ հաւատարիմ մալով բուն բառակազմութեանն և Փառք անբաժանելի եւ միասնական սր.

ռերրորդութիւն հաւը եւ որդոյ եւ հոգոյն սրբոյ յաւիտիան ամմէն կազմեցաւ սր. ռերգանան դաւթի լաւ՝ եւ յընդիր աւրիւնակէ գառնիցնց՝ վարդապետի ի թվականիս հայոց Ա. Ֆ. Ե., մայիս Ժ. է., և աւրեն ուրբաթ Ժ. Բ. Ժամե: Ի հայրապետութիւն հայոց մեծաց տր. միքէլին եւ պիւր համայստն եղարցն եւ փոքր հայոց օտր: Խաչատուրին: Ի չորրորդ ամի Սուստու երգնկացի Մելքիսեդեկ եպիսկոպոս: ի ամայրայքաղաքն, ի Վանատիկ ի հայոց հոգետունն: եւ կամակցութիւն: այս քահանայից ար. անանիահն ար. ալէքսանին օտր: յովհէսին սարգիս արեղին ար. ածայսուր ալէքսանոս տիացուն պետրոսին խուսափիանին եւ սրբան: եւ ճաւանին: Սիշեացք ի մաքրայիայլ աղաւթն ձեր զաշխատութեաց սորպա զսիմէտն ծերն: եւ զթոխացի սարգար եւ զեւ ըստցի տուներն եւ, ած. այլէ զծեզ իւր միւսանկամ գալուստն և Ամմէնն (Վերցին բառն առանց վերցանեսի): Արդ «Ամմէնն կարելի է որ նշանակում է վերջ թիւատակարանին, բայց ըստ որում վերջակէտ չունի և ըստ որում մեր լեզուին մէջ և Ամմէնն» նաև նշանակում է համայն կամ բովանդակն, կարելի է որ գիտաւորութիւն կար քանի մի բառ եւս, որը օրինակ Սերբւա թղթերի քանակութեանց թիւն եւ այլն, տպագրել յաջորդ՝ կամ ամենավերջն՝ էջին վերայ (էջ 544) որ թափուր մնացած է: Այդ ժամանակի նոյն հսկ Սերեւմտեան ապկաց տպագրեալ զրեանց մէջ՝ անսովոր երեւոյթ մի չէր, միւնքոյն տպագրութեան օրինակներն մէջ, աստ և անդ, բուրորվին թափուր էջերի հանգիպելոյց, և, այդու, ընդհատելով բնաբանի շղթան: Դիտելի է, նաեւ, որ թիւատակարանին ըստցի տուներն (*) բառն կերեկի թէ աւաղազումն է մեր ընդոդիմերն բառին:

Լուսորն Ս. Տիգր Մ. Գրիգորի Արքան:

(*) «Եթե ըստցի տուներն աւելի հաւանական է որ նշանակէ Սերաստացի: Փոքր Հայրի բարբառին մէջ Սերաստացի բառը ծայլաշղումավ ճեղքինեալ եղած է. Սերաստ, Սեւացի, Սիւացի: Սեւացացին կրնայ ըլլալ աւելի խաթարեալ ծերը Սեւացիին: — Արգարի հնա Սեւաստացինը իլինին այդ միջոցին աւելի բան հաւանական է. անդի որ զիմնին ի պատուի թենէ թէ Արգար կուոմ մեկնեցաւ Սերաստացի:» Ե. Ի.